ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ 4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/ԼՈՏ.Կ./5490-16

«21» 11 2016 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ձեր 17.11.2016թ. թիվ 307-ի 6 գրությանը

Հարգելի տիկին Դոյդոյան

2016թ. պետական բյուջեից «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով Լոռու մարզպետարանին հատկացված է 39745.2 հազ. դրամ, որը համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետի կիսամյակային արդյունքների հիման վրա հունվար և հուլիս ամիսներին հատկացվել է աշխատակազմի 123 քաղաքացիական ծառայողների:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն «Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ տարեկան ոչ ավելի, քան 3 անգամ»: 2016թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին վերը նշված օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից հատուկ առաջադրանքների և որակով աշխատանքների կատարման համար մի շարք ծառայողների տրվել է լրացուցիչ պարգևատրումներ, որի ընդհանուր գումարի չափը կազմում է 1030.0 հազ. դրամ:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Հ.Պապոյան
հեռ. (0322) 4-47-29